ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱԹԵՎՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ՝ 30.10.2006 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6-18 ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ, դիմելով սահմանադրական դատարան, քաղաքացի Մ. Գասպարյանը՝ ձևական առումով առաջ քաշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197 հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի 1-ին պարբերությանը և 31 հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխանության խնդիրը, ըստ էության բողոքարկում է օրենսգրքի նշված նորմի կիրառման և դրանով պայմանավորված՝ իր սահմանադրական իրավունքների պաշտպանության խնդիրը։ Այս հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի իրավազորությանը։ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի պահանջներին համապատասխան սահմանադրական դատարանն իրավասու է քննության առնել այն անհատական դիմումները, որոնք առաջ են քաշում և հիմնավորում կոնկրետ գործով վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը։

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

Մերժել քաղաքացի Մաթևոս Գասպարյանի դիմումի քննության ընդունումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 նոյեմբերի 2006 թվականի
ՍԴԱՈ-70